

16086

ՈՂԲԵՐԳՈՒ ՆՐԱԻԻՐԱԿ

ԲԱՐՁՐ ՀԱՅՈՅ

ԵՐԱՍՏԱՆ

ՄԻԿԱՅԷԼ ՊԵՐԷ

1894 Նոյեմբեր 1 Ի Ռեդիկցիա



Վ. Ա. Ռ. Ն. Ա.

ՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԷԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1897

91.99

7-52

Printed in Turkey

891.99  
7-52

ՈՂԲԵՐԳՈՒՆԻ ՀՐԱՒԻՐԱԿ

*w*

ԲԱՐՁՐ ՀԱՅՈՑ

10

ԵՐԱՍՄԵՅՑ

ՄԻՔԱՅԷԼ ՊԵՐԷ

1894 Նոյեմբեր 1 ի Օրրկեմ



Վ.Ս.ՆԱ.

ՏՊԱՅՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1897

20 03



նախնի Հայոց բազմաւարդ քաղաքները հաշմարտ  
անասն :

Առանց արտասուաց զհարսոցին անցնից կիսա-  
կործան տաճարներէն , եւ Հայաստանի բարերայ  
անխանջ մշակաց սրբազան շիրիններէն :

Յիշեմ Բարձր Հայոց Հրաւիրակն եւս նոյն ոգ-  
ւով կ'առաջնորդէ Հայոց գէտ ի բարձրն Սեպու-  
ի Հայրենիա :

Հաջրեւասիրութեան քաղցր սերը նոցա մէջ  
բոցալուսել , զարթուցանել :

ՄԻՔԱՅԵԼ ՊԵՐՃ

(Երեզան)

ԲԱՐՁՐ ՀԱՅՐ

ՈՒՆԻ ՈՒԹԸ ԳՆԱՆՈ

Եկեղէի

Ապէր

Մննուր

Շաւղմի

Գարաւաղէ

Գերզան

Սանաւաղէ

Կարին

Սորա իւրեանց գիրքով Հայաստանի ամե-  
նաբարձր գաւառներն են . այս պատճառաւ  
Բարձր Հայր անուն առած են :

## ՆՈՒԱԳ Ա.

Բարձր Հայոց Հրաւիրակը կը յորդարէ  
Հայ ժողովուրդը ելնել այն սարժալի Անպուն  
լեւր, ու հայոց Պարբեւ մեծ հայրապետը  
հանգչած է:

Ճանապարհի աշակտլի գտնուած Եո-  
ղակաթ Ս. Ասուածածնի մենասանը կ'այ-  
ցելն , անդ հրաւիրակը կը խօսի սոյն մե-  
նասանին վրայ եւ զիբնն առաքինի, ջե-  
մեռանդ լինելու կը յորդարէ:

## Ա. ՆՈՒԱԳ

Սիրեցեալ Հայկազունք ,

Բարձր Հայոց հրաւիրակը այժմ զձեզ կը  
հրաւիրէ ելնել բարձր Հայոց դաւարողեզ լեւ-  
նադաշտերը: Եւ այդ սառույցապատ հսկայ  
լեւանց մէջ բարձրայող Հայաստանի լեւանց  
թագուհին Անպուն լեւր: Ուրանեզ երբեմն  
Հայաստանի ըւսաստուն կ'առանձնանար նորա  
անտառախիտ ծառոց, ժայռից եւ փապարնե-  
րու մէջ:

Սրբակեաց ծերունի հովուապետը՝ անդ կը  
հօկէր, կը աքնէր, այդ բարձրութենէն Հա-  
յաստան աշխարհին կը նայէր դորովագութ  
աչօր:

Հայաստան, որ իր բազմադիմի չարչարա-  
նօք նոր ի ըյս եկած էր, իբր փոքրիկ մանուկ  
խանձարուրոց մէջ փաթթուած, խնամակա-  
րօտ կ'երեւէր:

Նա՛ ի սէր այս նորածին Հայաստանի, անդ  
կը աքնէր, կը ճգնէր անբուն, երկնից գը-  
թութիւնը կը հայցէր:

Երկնից զուարթունք դունդ գունդ կը փուլ  
թային ի տես մարմնով ճգնողիս :

Այժմ և դուք Հայ ազինք, տիեզերաց չորս  
ծայրերէն կը փութար գալ տեսներու այս  
չնաշխարհիկ այլևորը, այլևոր լերանց մէջ :

Հրաւիրակը ձեզ կ'առաջնորդէ ելնել այդ  
լեռնաշղթայներէն վեր, շատ վեր, ուր չկայ  
քնակութիւն մարդկան :

Եկեղիք գաւառը իւր զուարճայի դաշտով  
Արեւելք պիտի թողունք, նորա Արեւմտեան  
օդատուն լերանց կողերը քերելով, բարձրա-  
նալ դէպ գաղաթները : Ուղղակի դէպ Արեւ-  
մուտք պիտի ընթանանք :

Տ'սէ՛ք, Հայե՛ր, մեր ճանապարհի աջ կողմը  
գանուած լեռնադաշտին վրայ հնադարեան  
մենաստան մը կ'երեւի, դորա անունը Շողա-  
կաթ Ս. Ստուածածին է, անշուշտ կը կա-  
միք տեսնել :

Այո՛, հարկ ու արժանի է տեսնել այս սրը-  
բազան հնութիւնը, այս նուիրական սրբա-  
վայրը, ո՛ն, համարձակ մտէք և երկիւղա-  
ծութեամբ դիտեցէք : Իւր հիմնադիրը՝ Սա-  
ղիմի մէջ յայտնուող երկնաւոր այցելուի տի-  
եզերաց փրկչի առաքեալ Ս. Թագէտոն էր,  
որ Հայոց Աբգար թագաւորի խնդրանօք կը  
դայ և Հայաստանի մէջ Աւետարանի սեր-  
մանքը սխառտ առնն տաւ կը հանդիպի : Ա-

ւանդութիւնը կը յայտնէ թէ՛ նորա տեսլան  
մէջ աստ կ'երեւի երկնից թագաւորին լուսա-  
փայլ գիմար . Եւ Աւետարանի խոնջեալ մշակին  
քաջայերութիւն կուտայ :

Նա այս տեղ ի պատիւ Ս. կուսին մատու  
մը կանգնեց զոր հեաղհեաէ մեր բարեպաշտ  
Էշխանները և Քրիստոսասէր թագաւորները  
կալուածներով և նուէրներով պատուեցին :  
Եւ մեր ոսկեգարեան գրականութեան առն  
գիտութեան թանգարան եղաւ : Այսպիսի  
վանքերէն կը ծնանէին երկասէր ուսումնա-  
կան անձինք : Հայ ժողովուրդը դիտութեան  
ըյս ասոնցմէ կ'սասնար :

Օ՛ն, սիրելիք, մանենք փոքրիկ մատուռը,  
իւր հնութեամբ որչափ փառապանծ կ'երեւի :

Կը քստմնին ոսկերքս, անցեալ յիշատակ-  
ներ յիւ կը զարթնան : Որչա՛փ կուտական  
ճգնող հայրապետք, սրբասէր անձինք կարդ  
լսս կարդի աստ համախմբեալ են հանուրց  
տիեզերաց Արարչի փառաբանութիւն մատու-  
ցանելու համար, իւրեանց սրտառուչ ողբո՛մ  
ձայներով այս հինաւուրց կամարները թըն-  
դացուցած են :

Ո՛վ երջանիկ դարեր :

Մարդկութիւնը՝ անմեղութեան, սրբու-  
թեան և արդարութեան մէջ կ'ընթանար,  
իբր աղաւնի սիրուն էր, այժմ մեզօք չարաց-

եալ, ազուացեալ կ'երեւին : Այժմ ծունբ  
 քրէք այդ Աստուծոյ փառաց աթոռոյ առջև :  
 Երկնից Տիրուհւոյն օգնութիւնը հայցեմք, որ  
 զմեզ եւս մխիթարէ, ապա զբութիւնն որ ներ-  
 կայ Հայաստանի հորիզոնը բռնող, զեղխու-  
 թեան, ամբարշտութեան, բաւելութեան, ան-  
 աստուածութեան խաւարամած մթին ամպերը  
 և մառախուղները ու այս օտարամուտ մար-  
 թիւնները հալածեմք, որպէսզի արդարու-  
 թեան իմանալի արեգակնայն պայծառ ըյսը  
 ծագէ մեր սրտերուն մէջ :


Հայաստանը լուսափայլի լուսով արդարու-  
 թեան և նախնի հայութեան ոգին կենդանա-  
 ծնի մեր ոգւոյն մէջ :

Տուք համբոյր այդ հողին և քարին որ  
 սուրբ է և հրաշագործ ուղղամիտ հաւատաց-  
 եալին : Ծառայե՛ք Հայ ժողովուրդ, զեռ շա-  
 բոններ պիտի տեսնենք : Այս երեսունի չափ  
 սենեակները օգարան կ'ըլլան հիւանդաց,  
 ուխտադիր ջերմեռանդ անձանց :

Ո՛հ, ի՛նչպէս նկարագրեմ և չափեմ այդ-  
 պիտեաց հաւատքը, որ վանուցս գոնէն փղըձ  
 կերով կը մերձենան Ս. տաճարին, ո՞ր սիրտ  
 կարող է տակալ զոցա հառաչանաց. բարէ՞  
 զարմացմանս, ակն յայանէ գիւրութիւն և  
 բժշկութիւն կ'օտոճանս, ողջանդամ կը յաւա-  
 ջանան իրենց շէնք :

Տարին մի անդամ Ս. կուսի վերափոխման  
 սօճին, ասա կը հաւաքուին Եկեղեցաց զա-  
 ւառի հայ ժողովուրդք՝ նախնի սովորութեան  
 համեմատ, երգելով Ս. կուսի «Այսօր ժու-  
 ղովեալ» գեղգեղածայն շարահանը. որչափ  
 հաւատացելոց սրտեր կը բոցավառուին : Հա-  
 զարաւոր անձինք կը շրջապատեն այդ մա-  
 սուռը, ակնապիշ կը նային այն սեղանին որ  
 իւր լուսավառութեամբ երկնից զնդածեւ  
 սրբիկները կը ներկայացնէ : Հայկական սրան-  
 ջնի երկնաթափանց մաղթանքները, շորա-  
 կոնները և երգերը երգելով ջերմեռանդ ժու-  
 ղովուրդը հոգեզմայլ կ'ըլլայ, մխիթարեալ  
 սրտով կը վերագառնայ :

ՎԵՐՋ



## ՆՈՒՍ.Գ. Բ.

Յոյն մենասանէն ելնելով, լեռնային  
աղին կը բռնեն:

Հրախրակը մի առ մի կը նկարագրէ  
նամապարհին պատահած վայելչագեղ սե-  
սարանները:

Յետոյ խօսքը դարձնելով լեռնային ա-  
նուաբայր գեպիւտին, կը դրուատէ Մեպուն-  
ոյ մեծապայծառ վայելչութիւնը եւ սքու-  
րիւնը:

Երեկոյեան վերջալուսոյն Կայիխօսի  
վանքը կը նստնին, կը մնան գիշեր անցու-  
նելու հոն:

Հրախրակը մամրամասն կը պատկէ սոյն  
մենասանի բոլոր անցները:

## Բ. ՆՈՒԱԳ

Ժողովուրդը-ք Հայոց, քայլերնիզ ուղղեցէ-ք  
դէպ ի վեր լեռնային փոքր ճանապարհաւ  
բնթանանք: Մի՛ անտարբեր անցնիք կարկա-  
շահօս փոքր աղբիւրներէն եւ առուակներէն,  
զոր բնութիւնը շնորհած է Հայաստանի լե-  
ւանց. խմեցէ՛ք առատ, թող զձեզ զովայնէ:

Զեփիւտը հայրենեաց, շնչեցէ՛ք առատ.  
դուք այդ ծաղկալից վայրերը համբուրելով  
կուզար: Թող ծծեն զձեզ այս ստրագիր ծո-  
ղովուրդ եւ խրեանց հիւժեակ, մոչեակ թու-  
քերը կենդանութիւն առնուն:

Օտար երկրաց մէջ խամբեր են. շնչէ՛, թող  
վերտին կենդանանան:

Ո՛հ, ինչ քաղցր էք, կուտական անտառնե-  
րէն գալով, հազարաւոր լեռնային ծաղկանց  
հօտերը ձեզ հետ կը բերէք:

Ո՛, դու երբեմն շնչեցիք Սեպուհ լեռան  
քարայրներուն մէջ բնակող ալեզարդ Պար-  
թեւական մեծ անձին:

Բազմաչարչար վկայն ծծեց քու կենսատու.

օգ , ուժ առաւ իւր տկար մարմինն : Մին մը-  
թին անմատչելի քարայրներուն մէջ նա իբր  
տխտակ կամ տատրակ տիւ և գիշեր մշտամըր-  
մունջ կը տքնէր : Ճիշդ մարմնեղէն Սերովբէ  
մ'էր , երկնային Սերովբէից նման անդադար  
կ'օրհնէր յախտենական մեծ անուն հզօրին :

Եւ դ'ս'ւ , զեփի'ւս , քանի քաղցր և սխառ  
կառանօք կը մերձենայիր պաշտելի անձին ,  
նորա ձայնի օրհներգութեանց ալէլուից ելելու  
էջները հասանազգ հետ խառնելով , կը տես-  
նէիր շատ հեռուն արձագանք տարովաւներով :  
Մինչեւ մի ին անտառներու , խառններու ,  
քարանձաւներու մէջ մաններով , մեղմանալով  
կ'անցայտանայիր :

Ժողովուրդք Հայոց , այսուհետեւ զուար-  
ճալի տեսարաններ պիտի տեսնէք , ձեր ամեն  
քաղաքիսի գոյնգոյն ծաղիկներու և ճոխ բու-  
սականութեան կը հանդիպէք :

Տեսէ՛ք , սրբնթաց առու մը որ օձապտոյտ  
կ'ընթանայ գէպի խոնարհ , երբեմն մեղմ խա-  
խաշալով և երբեմն անհզ շառաչմամբ իւր բա-  
լրի ամայութիւնը կը վրդովէ :

Տեսէ՛ք , վայրենի կենդանիք , որ քարանոց  
ծերպերէն գորս կ'ենին և ապշութեամբ  
ձեզ նայելով խօսոյն կ'անցայտանան գէպի  
անտառներուն խորքերը :

Տեսէ՛ք , զանազան սիրուն թռչնոց երամակ

իրենց ճուղիւններով , ճլլըլալով օդին մէջ  
կը նուաղեն : Նորա իրենց բոյն ընտրած են  
հաղարամեայ Մայրեաց գագաթը կամ ծա-  
ռոց խոռոչներու մէջ :

Տեսէ՛ք , անաղին տարեր , ձորեր , հովիտ-  
ներ որ հինաւորց անտառներով զարգար-  
ուած են , հաղարաւոր մշտահոս ախունքներու  
արծաթախալ պարզ ցորտ ջրեր , որ ամէն  
կողմէ կը վաղեն և այս ամայի բուսեան  
մէջ անուշ կենդանութիւն մը կը սիրեն :

Քիչ մ'ալ քայլերնի՛ք շարե՛ծցէ՛ք գէպի վեր  
սա բլուրին վրայ ելնենք արտեղ փոքր դաշտ  
մը կայ և փոքր գետակ մը կը վաղէ . այդ  
դաշտը ծաղկամարդ կ'ըսուի . այստեղ մի քիչ  
հանգստանանք :

Եկեղիք գաւառի թարմ լուռները , սերը ,  
կողին , պանիրը և Եփրատէսի ակործանամ  
ձկները հանեցէ՛ք , խումբ խումբ սեզան բար-  
բեցէ՛ք ծաղկամարդի մարդակեանոց վրայ-  
բացօրեայ գիւղական խնճոյքնիկ բլրէ՛ք :

Եկեղեաց դաշտի ընտիր այգիներու որթա-  
տունիկէն պատարտաւած արիննազոյն  
թուղ գինիներէն խմեցէ՛ք , թո՛ղ զբանան  
Ձեր կթոս ծունկեր և լքեալ անդամներ :  
Սրբ կուշտ և զուարթ հանգչած , կազդու-  
ուած Հայկայ սրղիք , ելէ՛ք ի չու . անտառ-  
ներէն անցանք , այլե՛մ սա ծաղկանց բերք պի-

աի անցնինք : Աստ կայ մի ծաղիկ որ Ան-  
թառամ կ'ըստի . ամբողջ լեռը պատած է .  
մի ասորի ամբողջ շխառամիր իւր գոյնը և  
անուշ հոտը կը պահէ :

Տեսէ՛ք , տեսէ՛ք բիւրաւոր մեզուայ պար ,  
ծաղկանց վրայ ի'նչպէս գտրգուբանօք կ'իջ-  
նեն , իրենց միօրինակ բզղիւնով , առուակ-  
ներու ձայնին հետ գեղեցիկ ներգաշնակա-  
թիւն կը կազմեն :

Ի'նչ հիանալի տեսարան , աշխարհի Հոս-  
տիչը զարդարած է Հայաստանի լեռները շքե-  
նալագոյն անթիւ բարիքներով , սրով բոբը  
աշխարհի մասնանիշ ցոյց կուտայ թէ՛ մար-  
գուն կարուսեալ գրախար առա է :

Անասրբեր մի' մնաք , անշահ , անօգուտ մի'  
անցնիք , անթառամ ծաղկանց փունջեր կազ-  
մեցէ՛ք , տանինք Աստուծոյ սեղանները զար-  
դարենք : Եւ երբ երթանք օտար երկիր Չեր-  
բնակարանները Սեպուհոյ գերազանց լեռան  
մէկ շիշատակը կ'ըլլայ : Արեւն ի մուտս կը  
խոնարհի , մենք ալ ծաղկանց լեռնէն խոնար-  
հինք զէպ ի վար զստիթ ախին վրայ դռնուած  
մենաստանին մէջ մեզ իջեւան առնենք : Դա  
չորբօրդ գարուն շինուած է գմբէթազարդ և  
կ'ըստի կայիփասի Ս. Յակոբայ վանք , Ան-  
պուհոյ ստորանն է , լեռնաշղթայից մէջ շին-  
ուած , շրջապատեալ գեղեցիկ ծառատունկե-  
րով և այգիներով :

21226-60  
52/57

Կ'ըսէ աւանդութիւնը թէ՛ Մծբնայ սրան-  
չերագործ հայրապետը որ կուգայ այցելու-  
թիւն տալու Հայոց Հայրապետ Ս. Լուսաւոր-  
չին , արդէն ինք նորա հորարեւորդին էր :

Աստ մի ժամանակ կը ճգնի , կը պատրաս-  
տուի երեսը Աստուծոյ լեռը և երկրորդ Սինա  
եղած Սեպուհը՝ պատուելու ի Սերովբէից  
պատուեալը :

Ս. Յակոբի ճգնարանը ճիշդ եկեղեցւոյ ա-  
ջակողմը կ'երեւի , փոքրիկ դռնէն մտնելով  
մի քանի աստիճան վար կ'իջնենք , մթին քա-  
րածայուի մը մէջ : Մաէ՛ք ժողովուրդք Հայոց ,  
համբուրեցէ՛ք այդ սրբազան քարերը : Աստ  
սրանչերագործ հայրապետը , արթուն հովիւր ,  
քրատնց և արտասուաց հեղեղներով թրջած է :  
Նորա կենդանի Աստուածահաճոյ աղօթից  
ձայնէն հրեշտակայ գունդք երկինքէն զէպ  
յերկիր սուտունեալ պարփակած են այս քա-  
րայր , իրենց կայան ըրած են , նորա սրտա-  
բուխ աղօթից իրենք եւս ձայնակցեալ իրր  
խունկ հաճոյական կը մատուցանեն առ Սմե-  
նասուրբ Երրորդութիւն : Հայոց այսահար ,  
ղենդոս անձինք առա կը զիմնն աներկբայ  
հաւատով . սրբոյս աղօթիւք ողջացեալ կը  
վերադառնան ,

Օ՛ն , ժողովուրդք , երկրպագեմք Քրիս-  
տոսի բնի առջեւ , նա իւր սուրբերով միշտ

փառաւորուած է . անբուն քաղցր աչօք կը նայի յայս սրբափայր զոր դարերու քանդիչ ձեւքերէն պահած է :

Հայոց անիշխանութեան սուսն , երբ հայու թիւը Քրիստոնեայ անուանը համար սասաիկ հարձանք կրեց Պարսիկներէն , Սրբարացիներէն , Թաթարներէն , Թիւրքերէն և բարբառս քիւրաքերէն , շատեր սրով մաշեցան , կեանքն աւելին օտար երկիր վարեցան . շատեր դազթական եղան տարադէպ գնացին , շատեր եւս կրօն և ողբութիւն մոռնալով յօտարութեան դարձան : Մնացեալները սրոյն երկիւզէն ամէն ինչ թողին , անտիկ լեռները փախան , քարերու մէջ ապաստանեցան : Այն սուսն Հայոց բոլոր հարստութիւնները , հնութիւնները և սրբութիւնները թշնամոյն կրիցը քոհ դարձան , հազարաւոր եկեղեցիներ և վանքեր աւերակ դարձան , տխուր աւերակաց հետքերը մինչեւ ցարգ Հայաստանի մէջ բաղմամբիւ կ'երեւին :

Նախաինամողին մի յատուկ տեսչութեամբը կը մնան դարձեալ շատ մենաստաններ , սրոնք թէեւ շատ անդամներ կողոպտուած են անագորոյն թշնամիներէն , դարձեալ կը պահեն իրենց հնութեանց հետքերը . յետագայ հայուն ցոյց տալու համար և կամ պատմական վկայ չիենլու նախնի Հայաստանի փառայր :

Կայիտիտի վանքն ալ թշնամեայ կասաղի արշաւանայ տնակոխ եղեր է , և մի անգամ երբ բռնակալ քիւրաին մէկը կը համարձակի վանքին ամէն ինչը իւրացնել , մինչեւ իսկ Ս. Հայրապետի Մասունքը , խաչեր , Սկիհներ թաւնալով ջորիներու վրայ իւր սուսն կը տանի :

Ահա արագ կը հասնի Սասունաձային բարկութեան շունթը իւր տանը վրայ . իւր ձեւքերը ջրաձգութեամբ կը քաշուին , խիտցաւոյ մէջ կը մնայ , իւր միամեր որդին կ'այլ ահարի , կիւնը անդամալոյժ կ'ըլլայ , անասունը կը շորանան . կ'ղգայ սր աներեւակ զօրութիւն մը զինք պատեց . կը յիշէ Հայոց կայիտիտի սրբափայրը կողոպտելուն անիրաւ վարմունքը :

Կը զղջայ , իսկոյն կը վերադարձնէ տունն ինչ իւր տեղ : Կ'ուխտէ , կ'երգնու այլ եւս այդ վանոց ձեւք ջիւսի :

Այնուհետեւ ոչ ոք համարձակած է Մեծաստանին վրասել , մեծ երկիւղածութեամբ կը հատաւան և կը սարսին :

Աս, հրախրակը իւր խօսք կուղղէ դէպ  
Երկինք առ ամենագօր, անգարագիր Հո-  
գին սուրբ Աստուած:

Կը հայցէ նորա թորմութեան ամենալից  
շնորհը, արժանապէս նուագելու զՄեպուհն  
Բարձր Հայոց:

Յե՛ս այնու կեղևնն Կաշիփոսի վանկէն. կը  
յորդորէ ժողովուրդը, մաքրութեամբ մերձե-  
նալ Աստուծոյ լեռը:

Ճանապարհին պասանած եւ շեսնուած  
վայելչութիւնները կը նկարագրէ:

Երբ բաւական կը մերձենան, հրախրակը՝  
Յովհանն ծործորեցոյն յօրինած շարականի,  
«Լեւիմք Հայասանի», կոչուած նուագը  
կ'սկսի երգել եւ գովարանել զՄեպուհն:

Մեպուհոյ մերձ Գոհանամ կոչուած սարի  
ստորոտը հասնելով կը հրաւիրէ այդ անուա-  
նակիր լեռան գագաթը ելնել. կը պատմէ սոյն  
լեռան վրայ եղած անանդական մասը:

Արեւամտին այդ սարի գլխէն ուղղակի Մե-  
պուհոյ գիրկ կ'իջնեն:



Ո՛ր, Հողի տուրք Աստուած, անկը եւ ան-  
ժեան, որ Երկինք, Երկիր, ծով եւ անդունդ-  
կը ըստ. Հրաւիրակին քո չուսոյց չալ թող  
կախէ, որ կարողանամ երգարանել զաստ-  
վազի սեպուհն Բարձր Հայոց:

Հողի ամենագօր, ըզուս թոթով, դրջն  
անխորձ քնար քրախ բեկբեկ վշտահար է:

Այս մեծութեան առջեւ շուարեալ մնացի,  
այլ եւս չհնչեր քնարս, ըզուս պապանձեալ  
է, դրխս չզօրեր առաջ երթալ:

Այս սարագիր, Հայկայ սեգունդ քանի՞  
օիրով եւ տարփանօք ընց Բարձր Հայոց պա-  
տանի հրաւիրակիս. բերի հասուցի Մեպուհ-  
ւոյ ստորտաները:

Այս վեհութեան, խորութեան ու բարձրու-  
թեան առջեւ կը տեսնեմ անկարողութիւնս:  
Այժմ անդունդները իջայ ալ չեմ կարող վեր  
ելնել: Ի քեզ յուսացեալ կը մնամ, Հօր հօր  
գլխով հողի: Դու երբեմն ճնչեցիր անշուք  
հովիւ Մովսիսին, նա քեզմով զօրացաւ եւ ե-  
լաւ քո երկնանման լեռոն Սինէ, ուր հրեղէն  
գօրօք եւ ահագին անսլեամբ իջած էիր:

Ջորայցիքը զի օ, որպէսզի կարողանամ ի կատար հասնիլ, սիրահար եմ Սեպուհի, ոչ բռնայն երգիչ մը կ'ուզեմ ըլլալ թշուառ անտէր հայաստանի: Թո՛ղ ողբամ, զի նորա բոյսը և արեւը Սեպուհւոյ լերին քարածայտերուն, ծառոց փայտարներուն մէջ մարեցու:

Ժողովուրդ Հայոց, երեսնը կայիփոսի վանքէն, Սրբոյն Յակոբայ աղօթից յանդակութեամբը գնանք, այս ուղիէն չխտարինք, ոչ ալ և ոչ ահեակ, ուղղակի դէպի վեր երեսնը, Այն ամուսնածուկ լեռներուն կատարներուն պիտի հասնինք, հինաւաւրց ահագին անտառներուն մէջ պիտի մտնենք: Պատրաստեցէք դուք Չեզ սրբութեամբ երեսը Աստուծոյ լեռը, նախաձայն մարդարէին քարոզութեան համեմատ, սուրբ, անբիծ սիրտ ունեցողը, արդարութիւն գործողը կրնայ Աստուծոյ լեռը երեսը. Չեր արտեր բարձրացուցէք տա Աստուած, աղօթից մրմունջներով մերձենանք:

Տեսէք, ի՛նչ անհուն սարածութեամբ հրակայ անտառներ կան, խիտ հինաւաւրց են, տոյնչափ բարձր և խիտ են, որ արեգական բոյսը գետին չի թափանցեր, և գետինը զանազան խոտաբոյսերով, մարդադեմքներով և ծաղիկներով զարդարուած պարտիզի մը կը նմանի, ամառ ատեն սրանչիլի զովութիւն մը կը պահեն: Այս ընդարձակ անտառները

ճարդկանց բնակութիւններէն հետո լինելուն հուսական անտառ կ'ըսուին, բռնաշունչ քամին շատը կտարեր է և շատն ալ արմատախիլ ըրեր կործաներ է, որոնք այդպէս կը մնան մինչեւ որ փոսին:

Հայկազո՛ւնք, արագ քայլերով գնամք դէպ յառաջ, մերձ ենք մեր ցանկալի վայրին: Ահա տախիկ, ես ձեր առջեւէն կ'երթամ, կը նուագեմ Յովհան Ծործորեցւոյն հողեշունչ նուագը: Նա Սեպուհւոյ արժանաւոր որդին էր, նորա բարձրարեւը կաղնիներու և մայրիներու տակ ուսաւ իւր ուսումը:

Այս լեռներ իրեն ներշնչեցին բանասեղծական խանդ և աւիւն: Նա սաստիկ սիրահար էր Սեպուհւոյ, ուր ուրեք որ գնաց իւր քաղցրարան պերճախօս բարոզութեամբ Հայազանց կ'առաջնորդէր դէպ արդարութիւն, դէպ Հայրենիս, դէպ ի Սեպուհն, եւ կը խրատէր չնունայ Գրիգորի շարշարանօք պարգեւեալ Ս. հաւասն, և ինք չմոռցաւ Սեպուհը որ իրեն կենդանական օգի ներշնչեց:

Մի օր սա զմայրած սորա վայելչութեան և սրբութեան վրայ, և սիրոյ բոցով վառեալ, սաղարթախիտ ծառոց հովանւոյն տակ նստած իւր նուագի թելերը ներդաշնակ կը պնդէր, երգելու և դրուատելու. Սեպուհւոյ սրանչեւ լի նկարը հանել ցոյց տալու բոլոր Հայոց:

իւր քաղցր նուազի ձայնէն հիացաւ բոլոր  
 Հայ աշխարհ . Սեպուհւոյ լեռան վրայ դայ-  
 լայլով այս սոխակիս ձայնի արձագանք ամե-  
 նուրեք հասաւ : Հայք նոյն նուազը երգեցին  
 Սասուծոյ տաճարներուն մէջ . և իրենց սրբ-  
 տերը մեծ խանդով վառեցին Սեպուհւոյ սի-  
 րով : Արժան է սոյն նուազը ասա երգեմ  
 թող արձագանք տան իմ ձայնի այս լեռներ :

Լերինք Հայաստանի ցնծացէք Սեպուհւոյ  
 դերազանց լերան Մեծապայծառ փառքին  
 վրայ . զի Հայաստան ազին լուսոյ սիւնը Ս .  
 Գրիգոր ասա հանգեաւ :

Աբարատեան Բարձր Մասիսէն աւելի կը  
 խնդայ Սեպուհւոյ լեռը , որովհետեւ ասա կը  
 հանգչի ապրեցուցիչ տապանը Ս . Գրիգոր ,  
 նովաւ կը փրկենք մեզաց հոսանքներէն :

Կարմեղոս լեռնէն աւելի գեղապանծ լու-  
 սով կը զարդարուի . երկնային զօրօք կը  
 պարփակուի . Հայոց հոգեւոր հօր Ս . Լուսա-  
 ւորչի կենդանի աղօթիւք :

Սինէական լեռնէն աւելի փառօք կը զար-  
 դարուի , վեցթեւական Սերոբէից կայան կը  
 լինի . կիզիչ կենդանեաց տեսանող Ս . Գրի-  
 գորի երեսները հոգւոյ սրբայ շնորհիւք Մով-  
 սէսի նման կը լուսափայլի . անդեղախոր ձորը  
 երկնից կամար կը յօրինուի :

Բէթ լէհէմի այրը կուսին ծննդեամբ պատ-

ուեցաւ . ասա Մանեայ այրը կուսանց ճրգ-  
 նաթեամբ կը փառաւորի : Գողգոթայի վեհ  
 Սրբավայրին խաչերն խորհրդին նման ասա  
 եղաւ խորհուրդ մը : Հայոց Տրդատ արքայի  
 ահայտցիչ սուրը Պարթեւական Հայրապետը  
 առնելով իւր ձեռք , ձգեց դէպ Երկինք .  
 օղին մէջ խաչաձեւ մնաց :

Ահաւասիկ մեր սղին երկուս կը բաժնուի  
 մին անտառներուն մէջ ձգուած ոլորապտոյտ  
 շաիղն է , եւ միւսը Գոհանամ բարձրագա-  
 դաթ սարի կատար ելնել անկից ուղղակի  
 Սեպուհւոյ դիրկ իջնել : Այս նահապետական  
 պատմական լեռը կարող էք դիւրաւ ելնել .  
 ելելէջները սանդխաձեւ են :

Օն երննք բարձր դիտանոց մ'է , շրջակայքի  
 զմայլելի տեսարանները կ'երեւին : սորա կա-  
 տար ձիւները անհալ կը մնան , նոյն իսկ ա-  
 մառնային տոթազին օրերը : Այս բարձրու-  
 թենէն կ'երեւի անհուն տարածութեամբ հե-  
 ուաւոր վայրեր . նոյն իսկ Պօնտոսի ծովը շա-  
 մանգաղ կը տեսնուի : Շրջակայ լեռանց կա-  
 տարներ սորա առջեւ խոնարհած կորուքամակ  
 կ'երեւին . իսկ Սեպուհը բարձրաբերձ անտառ-  
 ներով զարդարուած փայելչազեղ կոյսի նման  
 կը տեսնուի :

Այս Գոհանամ կոչուած սարին համար ա-  
 ւանդութիւնը կը պատմէ թէ , այն աշխարհա-

կալ ջրհեղեղին, Նոյ առարկնի նաշապետը  
 Աստուծոյ հրամանաւ իւր ընտանեօք եւ ամէն  
 Երկրային արարածներով տապանի մէջ մտած  
 էր: Իւր տապան փոքր տաշեղի նման անհու-  
 նութեան մէջ կը աստուգեցէր, այլիքներու  
 խաղաղիք դարձած ջրերու երես կը շրջէր:

Երկրի Հաստիչը զիջաւ արդար Նոյի աղա-  
 շանայ քաղցր ակամք սկսաւ հայիլ դէպ յաշ-  
 խարհ: Ռոտումները, կայծակները, գէղա-  
 դէղ թխալայորդ ամպերը, բռնաշունչ քամին  
 տեղատարափ անձրեւները խոյս տուին:

Երեւցաւ պայծառ արփին, Երկինք իւր  
 երեսը ցոյց տաւաւ երկրին, տարերք խաղաղ  
 էին, որովհետեւ ամբարիշտ կայինազարմ Սե-  
 բանդ-ք ջրակուլ եղած ըլլալով այլ եւ խոռ-  
 զերու պէտք չկար:

Ջրերը սկսան նուազիլ, Աստուծային  
 նախախնամութեամբ Նոյի տապանը այս վայ-  
 րեր եկած կը շրջէր: Երբ այս ընտան գաղա-  
 թին վրայէն կ'անցնէր ջուրք նուազած ըլլա-  
 լուն տապանի յատակը ասոր զարնուեցաւ,  
 եւ քերելով անցաւ:

Նոյ տեսնելով տապանի անօրինակ ցնցումը,  
 գիտցաւ թէ ցամաքը պիտի երեւի, լերանց  
 կտաւրները երեւնալու մօտ են: Գոհանամ  
 դրէն տէր տղթքը մրմնջեց աստ, Գոհանամի  
 լեռը բաւեցաւ:

Մորա կատարի աւերակը կը տեսնէք. ա-  
 ռաջ փոքր մատուռ մը եղած էր: Գոհանամի  
 դագաթ ելնել ահրածեշտ պարտք է եղեր  
 Սեպուհոյ ուխտաւորաց համար:

Այժմ մի քանի քարեայ խաչեր կան, համ-  
 բուրեցէք այդ Աստուծային նշանները որ  
 քարերու վրայ անջնջելի կերպով դրոշմուած  
 է: Դարուց ի դուրս պատմելու ցոյց տալու  
 Քրիստոսնութեան Մրբատեղիքը:

Հայ զաւակունք մեր աչքեր տեսան Սեպու-  
 հը նորա մէջ գեղեցիկ կաթողիկէի Հայոց հով-  
 ուապետ Ս. Գրիգորի քնարանը: Գոհանամի  
 լեռան վրայ մենք եւս Նոյի մաղթանքը եր-  
 գենք ըսելով « Գոհանամ դրէն Տէր »:

Տեսէք նա Պարբսպ չունի այլ միջակ մե-  
 ծութեամբ եկեղեցի մ'է փոքր գաւիթ մը, փոք-  
 րիկ զանգակառուն մը որ ուխտաւորաց ասնն  
 տանն անընդհատ կը հնչէ. որպէս զի Հայ  
 ժողովուրդը ճանապարհէն շեղելով անտառ-  
 ներուն մէջ չկորսուի, նորա ձայնով անմալը  
 դայ հասնի: Նորա ձայնը արդ, ն շատ հեռա-  
 ւոր վայրեր կը տարածուի:

Արեւն ի մայր կը մտնէ. Օն մենք եւս Սե-  
 պուհոյ դիրկը մտնենք:



Հրախրակը աս կը նկարագրէ գիշերային տեսք Աստուհոյ գլխին, աստղաց փայլը, լուսնոյ ընթացքը, քամոյն մեղմ ընթացքը, ծառոց թխուր տասփիւնը, սաւեռաց ընդհանուր լուսթիւնը:

Որք կը կարծես չեն ուզեր խոռովել Աստուածանման անձին յափտեական բունը, նորա ազօթից մրմունջ երբ լոյսիցն նոճա ես լուծ եմ:

Գերեզման կ'երթան. կը պատուիրէ երկիրով մեծնալ գի Հայասանի սապանակ ուխտին է. ի դիմաց Հայասանի դառն ողբեր եւ կոծեր կ'ընեն: Հայասանի վերանորոգութեան համար երկարօրէն կը հայցեն:

Իրենց դառն արժանաց եւ ողբոց մէջ գերեզմանին վրայ լուսափայլ գուարթուն մը կ'երեւի, որ իւր կուրծքին վրայ Հրեշտակ Հայասանի մակդիրը կը կրէ:

Կը յայտնէ երկնից Հօր պատգամները եւ գիտեմք կը քաջալերէ ու կը վերանայ:

Գիշերը իւր մթութեան վարագոյրը ձգեց երկրի վրայ, երկնից աստղատունը լուսաշողջող նշուլիք սկսաւ ծագիլ Սեպուհոյ (Երկնից թագուհին) լուսին. քանի՛ պայծառ նաղելաճեմ կ'ընթանայ երկնակամարին վրայ. իւր լուսով կը պատառէ երկրի մթութեան սեւ վարագոյրը: Դժուարահաճ կը բաժնուի որբոց շերիմներէն: Երբեմն իւր տեսած աղիողորմ տեսարաններէն զարհուրած՝ կը պահէ իւր լուսալիւր քնքոյշ երեսը. հարսի նման կ'երթայ քողի տակ կը պահուըտի խրուոված, և քամին որչափ մեղմ և ակնածանօք կ'անցնի Սեպուհոյ գլխէն, չուզեր վրդովել սորա մեծ խաղաղութիւնը:

Ջրոց հոսանսոց գզրգիչ ձայն անոտ չլսուիր, ընդհանուր լուսթիւն վեհութեամբ կը թագաւորէ. բնութիւն չուզեր խռովել աստուածանման անձին չարչարեալ, վաստակեալ մարմնոյն խաղաղ յախտեական քունը:

Երբեմն քամին մեծ հոսանօք կուգայ կը բաղի ծառոց կատարներուն, նոքա փուր սոստափիւնով կը շարժին, անբան բերանով, բնութեան ձայնով իրարու կը մօտենան, արխուր ձայներ կը հանեն:

Պա իւրեանց ողբն է որ հովի հոսանայ  
 հրամանով կը կատարուի, յետոյ անշարժ կը  
 մնան, մեռելափայլ քնոյ մէջ կը թաղուին,  
 լուսթիւնը վերստին կուգայ կը թաղաւորէ:  
 Տարերք՝ Պարթեւական մեծ անձին սուղը կը  
 պահեն, երբ նորա մշտախօսիկ աղօթից մըր  
 մունջը և հառաչանք ընցին, իրենք եւս  
 լռեր են:

Այս սրբազան տխուր լուսթեան մէջ կը  
 հանդի Հայաստանի բարերար ողբերգուն և  
 անձնանուէր հովիւը: Սրգեօք ո՛ր Հայ չղղած  
 ուիր և դառն շարտասուեր բնութեան ձայ  
 նից հեռ: Միայն դարեհամ յորդահոս աղ  
 բի բը չքնանար, միօրինակ մեղմիկ ձայնով  
 իւր բոլորի մեռելական լուսթեան կենդանու  
 թիւն կուտայ, անդադար կ'արտասուէ:

Դա բժշկական ջուր է, որովհետեւ Ս. Գրի  
 գորի աչաց կայլահօք, հաճոքական աղօթիւք  
 բղխած է ծերունի հսկողին ծաղաւթիւնը  
 անցունելու համար:

Օ՛ն, ժողովուրդք Հայոց, Պարթեւական  
 անձին հեռ բոլոր բնութիւն կայ ի քուն. այս  
 զիչերային վե՛ս՛ լուսթեան ասեն մանենք  
 Աստուծոյ ատճաբը, որ մի քանի կանթեղնե  
 լու վարկուն թախմալից լուսով լուսաւոր  
 ուած է, կարծես թէ նորա եւս ի սուղ հա  
 մակեալ են:

Չախտիողմեան դասի փոքր դանէն ներք  
 մտէք ոլորուն ճանապարհներով, կը ասնի  
 ճիշդ աւագ սեղանի ետեւը կաթուղի կէին  
 տակ, որուն աջակողմեան որմին մէջ աշնդարդ  
 Հայոց հարապետի տխուր գերեզմանն է:  
 Պար առեալ գրկեցէք տապանը:

Ո՛հ, ի՛նչ սրտածմիկ տեսարան, մամեր և  
 կանթեղներ կը վառին նորա վրայ, իւրեանց  
 տկար և շողջողուն լուսով հաղիւ մի քիչ կը  
 հալածեն թանձրամոծ խաւարը. իրենք եւս  
 կ'ոջնչանան և կ'անցնին: Երկնից մշտավառ  
 լապտերք, լուսին, իւր դողդօշուն լոյսը լու  
 սամուտէն թախած է հայրապետի քնարանին  
 վրայ. ո՛հ, նա ալ թախմալից զիմօք կը մեկնի:

Հինն իսրայէլ իւր տապանակ ուխտին այն  
 չափ անբաւականմբ և պատուախիրութեամբ  
 կը պաշտէր, որոց վրայ ֆերտիբից սակեայ  
 արձանները հազանի ունէին: Հայաստանի տա  
 պանակ ուխտին այս առաջանն է, սրն որ օ  
 դարան և բնակարան բլլալով, Ս. Երբորդու  
 թեան, երկնից Ա. զուարթունք իջած, անթարթ  
 աչօք կը հսկեն սորա վրայ: Երկիւղիւ համ  
 բուրեմք, ի դիմաց համայն Հայաստանի մեք  
 աչաց ազի արտասու թափեմք. Հայաստանի  
 բարերար և լուսատու Ս. Գրիգորի շիբին  
 վրայ: Դառն արտասուք Հայաստան ոչխարհի  
 դառն ցտեղը պատմեմք և ողբամք, ըսելով,

« Գու նորա ըյսը և արեւն էիր՝ երբ թագեար այս լերանց ետեւ, նա խաւարի մէջ մնաց, և քո գուշակած մեծամեծ շարիքները եկան կատարեցան » :

Ո՛հ աե՛ս, Հա՛յր պատուական, աղիողորմ կոծերնուս ոգիդ խափեալ է, չես ուզեր հասիլ այս աշխարհի, գէթ մեր աղաչանաց զեջանիր, դարձիր ի մեզ : Տե՛ս սրդիքներդ, անտէրունջ, առանց թագի և գահի մնացին :

Հայաստան աշխարհ՝ օտարաց ոտնակոխ, նորա սրբութիւնները անարգուած, ակերակ դարձած, Հայութիւնը ցիր ու ցան սփռուած երկրագնդիս վրայ, շատեր խորթացած և օտարացած են իրենց մայրենի գրկէն, սակաւաթիւ մնացին, կ'աղաչեմ, նոցա վրայ քո գութ շարժէ : Հինգ հարիւր տարին լրացաւ, մեր մեղաց պատիժին չափ չլրացաւ, մեզ համար աղաչէ, դու մահ ես կենաց աղբիւրին Ս. Երբորդութեան անմատոյց ըյսին :

Հինն խորայէլ, իւր մեղաց համար պատժուեցաւ, բայց երբ եօթման սուն ամ լրացաւ, անմարմին հրեշաակք նոցա աղաչանաց ձայնակցեալ աղերս կը մատուցանէին ակեղերալինամ Արարչին ըսելով, « Այս եօթմասուն ամ է, ողորմէ երուսաղէմի » : Կը խնդրենք թշուառ Հայաստանի համար ծունր դիր, աղաչէ, արտասուէ, մեր աղաչանաց ձայնակ-

ցեալ ի գութ շարժէ հայրագութ հաստիչը, սսելով, « Հինգ հարիւր ամ բորբեցաւ, ուղորմէ Հայաստանի » :

Քոյին ընդունակ աղօթից օժանդակութեամբ թող աղատի Հայն գերութեան ծանր շղթայներէն : Նախնի փառօք թող կանգնի կիսակործան տաճարները, հողակոյտ դարձած բազմամարդ քաղաքները և դիւղերը : Թող վերանորոգի վշրեալ թագն ու գուաղան, նոցա վրայ փայլ ի փայլ թող ծածանի խաչակիր գրօշակն Հայոց :

Ահա այս է ամեն Հայու սրտի փափաք և այս սգաւ Ռարձր Հայոց Հրաւիրակը՝ տարագիր հայոց առաջնորդելով բերաւ քո յախտենական մենարանը :

Հայաստանի լուսաւորութեան մեծ դործին համար յաշխարհ եկար, ապրեցար, աղօթեցիր, տընեցար, չարչարեցար անաանելի չարչարանօք, մինչեւ Հայաստան լուսափայլեցաւ : Սրտիդ փափաք կատարուած աններով, ծերութեանդ ակար օրերը եկար աստ միայնութեան մէջ անցունելու : Սակայ արտաօք կը հայցէիր յերկնից որ Հայութիւն և իր կրօն անազարտ մնայ մինչեւ աշխարհի կատարածը : Քո ընդունակ աղօթիւք կը մնայ Հայութիւն և քո աւանդեալ կրօն : Երկնի և երկրի առջեւ Հայաստանի պաշտպան մը ե-

բեցար : թող երտխտապարտ ժողովուրդը մերձենայ այդ ցամաքեալ ոսկերացոյ :

Ժողովուրդ հայոց , համբուրեցէ՛ք այս վեհ ալեւոր սքանկեալ գլուխը , որում հրեղէնք սպասանէին և զոր ակնածանօք պատուէին : Այս աստուածատես աչքերուն , որ այս հանգըստարանի մէջ փակեալ է , աստուածախօս լուսեալ բերանին մի դադարիք համբոյր մատուցանել : Ձեր աչաց կայլակներու ցողով թրջջեցէ՛ք չորացեալ ամբողջ մարմինը : Հայրախնամ ձեռքերդ տո՛ւր , Ս . Հայրապետ , թող համբուրեն քո որդիքդ , Հայրական աջովդ օրհնէ՛ զՀայու թիւն և զՀայաստան աշխարհ : Օրհնէ՛ որ զօրանայ օրհնեալ Հայն և իւր արդի սկսած վերանորոգութեան մեծ գործը յաջողութեամբ կատարէ :

Հայկազո՛ւնք , երկնաշու դարչապարացը խոնարհեցէ՛ք , մի թողուք մինչև ձեր կարօտը ընուք և փափաքնիդ ստանար : Ձեր աչաց վտակներ հոսեցէ՛ք , թո՛ղ խառնուի մինչև ցարդ հայութեան լոցած արտասուաց հեռ դեօթէն , թո՛ղ ընթանայ Հայաստանի սպանգութիւնները մարբէ , հայ որդւոց սըրսերն ու մտքերը սըբէ , վարքերն ու բարքերը ուղիւ : Եարունակեցէ՛ք ձեր կոծեր աղիտըրմ ձայներ ու լոցեր , Հայաստանի անմեղ , արիւնաների նահատակաց , ողբոց և

դաւնակակիծ չարչարանաց հեծութեան ձայնին հեռ խառնելով , միահամուռ մատուցանենք աստուածաբնականին աթոռ , մինչև երկնի վթութիւն շարժի Հայաստանի վրայ :

Տեսէ՛ք , Հայ մանկունք , լուսամուտէն կերելի , երկնից ատեղատունէն լուսողեօտ պատգամաւոր մը կ'իջնայ , իւր պայծառ աչքեր սու մեղ յառած է , լուսովեօտուր թեւերը թափ ի թափ դարնելով , ի՛նչ արագ կը սըլանայ , նա մարդ չէ , թէեւ նմանութիւն ունի : Ի՛նչ դեղանի է , ի՛նչ սիրուն , երկնից Հօր պատգամաբեր հրեշտակն է : Իւր կարծքին վրայ դրուած է հայացի ոսկեղէն տառերով , « Հրեշտակ Հայաստանի » մակդիրը : Կը մտենայ ահա ասիկ , ոսկերքս կը քսամնին , ողիս կը խռովի : Եւտ ոտքի ելէ՛ք , թուղթեր կան ափին մէջ , պատգամաբեր է , պատուհասիչ հրեշտակ չէ , Օ՛ն , փղձկեցէ՛ք , լոցէ՛ք , մինչև Հայաստանի բազմադիմի ցաւեր բուծին :

Հրեշտակը կանգ առաւ սրտայոյզ , այս աղիտըրմ տեսարանը կը զօրէր տեսնալ : Յանկարծ ամպերու սրտաման ձայնով հրեշտակը , Լուսաւորչի գերեզմանին վրայ տեսնուեցաւ , անուշահոտ բուրմամբ լցոյց զմեզ , իւր ոտքերուն տակ ամպեր կ'երեւին . զեալն խոնարհեցանք ու գոչեցինք միաձայն . « Փա՛նք քեզ Աստուած » :

Ստակում և երկիւզ ատրեց մեզ, անզօր  
 դեակն վառած մնացինք, շէնք համարձակէր  
 լուսեղէն զուարթնոյն նայիլ: Գեղասեւիլ  
 սքանչելի զուարթունը՝ իւր նուրբ, քաղցր  
 ձայնով գոչեց մեզ «Չօբայե՛ք, մի՛ երկնչեք»:

Նորա սիրուն ձայնը մեր սրտին խորը թա-  
 վանցեց, ուժ առինք, բայց ահաբեկ անոր  
 տեսչանէն իրր ունկնդ իր խոնարհեալ մնացինք:

Հայաստանի պաշտպան հրեշտակն եմ, երկ-  
 նից չօր պատգամները եզայ այժմ: Հինգ  
 հարիւր տարուայ Հայաստանի ողբալի վիճակը,  
 որ վալի, կոմի և արտաստաց սխտը տեսա-  
 բան դարձաւ, Ես այդ ամէն զրկանաց բոլոր-  
 ներ, հարստահարեալ անմեղաց ձոյներ, հըշ-  
 մարիտ նահատակաց արիւններ, չարչարանաց  
 ողբեր, Ս. մանկանց հառաչանքներ և արդա-  
 լաց սղօթքներ կը բարձրացունէի Յախան-  
 նականի աթոռ, կը հայցէի անդադար, ողբ-  
 մէ՛ Հայաստանի, մինչեւ յերբ քո մեծ անունդ  
 հայհօ ի հեթանոսաց մեջ: Բայց Հայաստանի  
 անցեալ մեղքեր բարդ ի բարդ գիշուած էր,  
 չարժանացաւ ողորմութեան: Մինչեւ զայսօր  
 անմիտիմար կ'ողբուի Հայաստանի դ բախա-  
 վալը աշխարհը: Մահւոյ կ'իջնէի հօգտըրօր  
 տաճարաց աւերակներուն վրայ: Տխրալ էմ  
 կը կրկնէի իմ հայրստաժը թէ՛ «Մեծանուն  
 Տէ՛ր, սրտմէ՛ Հայաստանի»:

Մինչեւ հինգ հարիւր տարին լրացաւ,  
 յանկարծ սկսաւ հայոց նոր վարդեր ծլիլ ու-  
 բացուիլ, և այս պատանի հրաւիրակին ես  
 ներշնչեցի, որ հայոց ժողովուրդը շարժէ,  
 բերէ աստուածահաճոյ սիրեցեալ լեռը Սե-  
 պուհ, Հայաստանի ամուր պատուարը:

Հայոց արտասուք աստ թող թափուի, ու  
 ըովհետեւ տիեզերաց Տէրը՝ Գրիգորի չար-  
 չարեալ վշտակիք մարմնոյն զթոռ աչօք կը  
 նայի: Կանգնեցէք ուղիղ, ձեր սղբերը պիտի  
 գաղբին, այլ եւս այս Ս. Տապան ձեր աչայ  
 արտասուքով մի յօղէք: Սերա աղօթքով Հա-  
 յոթիմուն կը մնայ և պիտի մնայ զօրանայ:  
 Հայաստանի բոլոր ողբերը զօրութեանց Տիրոջ  
 ականջը հասած է Գրիգորներու, Ներսէսնե-  
 րու, Սահակներու Հայաստանի բոլոր արդա-  
 լաց սղօթից շնորհիւ:

Յախաննական տիեզերականամ հզօր պետր  
 հրամայեց ինձ պատգամաւոր ըլլամ՝ բոլոր  
 Հայոց իւր պատգամները աւանդեմ:

Ստուած տասց՝ թէ հաշուած եմ քեզ  
 հեա Հայաստան, քեզ սրբացնող, սրգիբդ  
 արախոյնող և տարագիր վարտլ, Ս. Տաճար-  
 ներդ քանդող թշնամիներդ պիտի կործանեմ  
 չարաչար. քու բոլոր սրգիբդ արեւելքէն, աւ-  
 րեւմտքէն, հարաւէն և հիւսիսէն պիտի  
 ժողվեմ քս մեջ. թշնամեացդ զօրութիւնը քս

որդուող ձեռք պիտի մատնեմ : Դու պիտի  
 փառաւորուիս յոյժ , աւերակներդ նախնի  
 փառօք պիտի կանգնին : Այս նշան , ձեզ Հա-  
 յոյց նոր սիրա , նոր կենդանական ոյի պիտի  
 ներշնչեմ որ զօրանան , միանան :

Եւ ես միշտ իրենց հետ պիտի ըրամ ու  
 պիտի յաջողեմ , կատարեմ իրենց խնդիրքը :  
 Եթէ արդարութեան ճանապարհը չմոռացան ,  
 ես զիրենք չեմ մոռնար :

Այս խօսքերէն վերջ , յանկարծ զուար-  
 թուներ սկսաւ բարձրանալ , իւրմէն վարդեց  
 թափեցան գերեզմանին վրայ :

Ինչպէս անցաւ չգիտեմք , միայն ըւստանու-  
 ալն կերեւէր նորա սքանչելի աւտիլը , կա-  
 պոյտ երկնականարին մէջ կը թռչէր արագ ,  
 ամպեր եկան ծածկեցին զինք :

Արեալոյսին գերեզմանին փոխն դուս  
կ'ելնեն :

Հրախրակը կը նկարագրէ Արեւածագի  
սփանչելի տեսքը :

Առաւօտեան օրհներգութիւն մը կասաւե-  
լով, դէպ Արեւել, ձախակողմեան զախի-  
րափին վրայ գտնուած Մանեայ այր կը սա-  
նի : Հրախրակը կը պատմէ ձեր, դիրքը եւ  
պատմական մասը, կուսանաց շիրմին փոխ  
սանելով կը նկարագրէ աշխարհի կասա-  
րածին մեծագործ արարչին այս հողագունի  
իջնալը, սարեւաց մէջ բուծուած մարդկային  
մարմնոց նորահաւ յարութիւնը :

Մանեայ այրի ուխտաւորաց Սեբազան Կա-  
թիլի սպասելիին կը պատմէ :

Յետոյ կը սանի Հայ զաւակունքը ծառոց  
հովանոյն սակ անդ դադար կ'առնեն :

Հրախրակը բանաստեղծօրէն կ'սկսի եր-  
գել Սեպուհը, նկարել նորա դիրքը, ձեր,  
անցեալ եւ ներկայ յիշատակներով գովել :

Համբոյր տուէք հանդատարանիս ուր զը-  
ւարթնոյն անուշահոտութեամբը եւ վարդերու  
թօթափամբը պատուեցաւ : Մխիթարուած  
ուրախ սրտով ելէք դուրս, արշալոյսը բաց-  
ուեր է : Սեպուհոյ արեւելակողման երկնից  
հորիզոնը դիտեցէ՛ք, ընտներու ետեւէն լու-  
սոյ անբաւ հոսանք մը դուրս կ'ելնէ : Երկնից  
անհամար աստղերը տեսնելով իւրեանց թա-  
գաւոր ամենամեծ մարդակ արիւոյն թաւալ-  
դըր շարժմամբ դալուստը . իրենց լոյսը կը  
նուաղի, խոնարհաբար ետ կը քաշուին : Խա-  
ւարի թագաւորութիւն իսկոյն կը հեռանայ  
աշխարհէն, սրայծաւ լոյսը նորա տեղ կը յա-  
ջորդէ :

Ս. յն լուսոյ դանձարան, հրաշեկ գունդը,  
հեռոզհեռէ կը բարձրանայ ըրանց կատարնե-  
րէն վեր, ցոյց կուտայ իւր սրայծաւ երեսը,  
ճառագայթներովը կ'ոյջունէ երկրի բար-  
ձունքը, յա իտենական արարչագծեալ շա-  
ղօք կ'ընթանայ հսկայապէս, անհուն սարա-  
ծութիւնը կարելով շրջան մը կատարելու,  
աւրով երկրի սրայծաւութիւն, լոյս, կեանք  
եւ սնունդ : Նախապատմող հոգեկիր իմաս-

տունք, դիտելով տեսան երկնի աստեղատան  
լուսեղէն անթիւ գունդերը, հիացան զար-  
մացմամբ նոցա մեծ վայելչութեան, օրինա-  
ւոր թաւարման և շարժման վրայ :

Նորա անձայն ձայնով, անբան բերանով,  
և անկենդանական շարժմամբ կը պատմեն,  
կը քարոզեն աշխարհի Աստուծոյ փառքը,  
նորա ամենազօր կարողութիւնը և ամենամեծ  
իմաստութիւնը :

Օ՛ն, ժողովուրդք Հայոց, երկրպագէք  
աստ մեծագործ հասօյլին, ասաւտեան օրհ-  
նեղութեանց ձայներնիս՝ թռչնոց դասըյլիկ-  
ներու անթիւ արարածոց ձայնից հետ միա-  
ցնելով ուղղենք գէպի վեր, գէպի պիեղե-  
լովնամ ամենակալ Արարիչը :

Բարեհամ աղբիւրին մերձեցէ՛ք, սառն  
ջուրէն սուէ՛ք լուսեցէ՛ք ձեր գիշերային հըսկ-  
ման դառն արատասաց հետքերը :

Գնանք գէպ արևելք, մեր աշակողման  
գտնելիք փնջն վրայ բարձրանանք ուր ասպտա-  
ժուա լեռ մի է, զգուշացէ՛ք, քարերը բռնե-  
լով վեր մագլցելու եթէ քայլերնիդ պիտի,  
պարսպաձեւ ժայռերէն կը դըրուիք անդրն-  
դաձեւ ձորի խորքը :

Այս գծուարին ճանապարհով գիտէ՛ք ո՛ւր  
կը բարձրանաք, արանջիւ Մաննեայ այր կոշ-  
ուած սեղը :

Մանն՝ որ Ս. Հովիտիմեան կուտանաց հետ  
եկաւ Հայաստան, հալածանաց ստան փախաւ,  
տուննձնացաւ այս քարայրին մէջ, որուն ան-  
բիծ սուրբ մարմինը՝ Լուսաւորիչ մեր սբբա-  
զան Հայրապետը գտաւ և ամփոփեց այս քա-  
րայրէն երկու քայլ հեռու փոքր քարանձախն  
մէջ որ երեք կանգուն երկայնութիւն, երկու  
կանգուն լայնութիւն և երկու կանգուն բարձ-  
րութիւն ունի. Եւ քարայրին առջեւը բոլո-  
րակ փոքր դաշտ մը կայ, մանենք նախ այդ  
քարայրը, ուր կը հանգչին մշտամրմունջ  
աստրալիս սրբասուն սկիերոտիքը. Եւ քա-  
րայրին առջեւը բոլորակ փոքր դաշտ մը կայ  
Շաս դարեր հորովեր անցեր են այս բարձ-  
րութեան մէջ, յաւիտենական թմրութեան  
մէջ ընկղմած : կը մնայ մինչև գայ այն օրը  
յուրում մեծագործ արարիչը այս հողագունտ  
իջնայ :

Բարէ՛ զարմայմանս. Այն ստեն երկրի  
խորը սփռուած մարդկային սերման հատիկ-  
ներ պիտի ծաղկին նորահրաշ յարութեամբ :

Երկնի մեծագօր արքայի հրամանաւ չորս  
սարերաց մէջ լուծուած, յաւիտենականու-  
թեան անդունդներու մէջ անյայտացած մար-  
մինք, իւրեանց ոգւոց հետ անսխալ պիտի  
միանան, զարթնուն և ելնեն գերեզմաննե-  
րէն, զօրութեանց ախրով առաջ սասնարու-

Խրեանց դործոց համեմատ վալ. & կամ պատիմ :

Բազի առեալ բոլորեցէք աստ , ծուներ զրէք խոնարհեալ զիմօք հայցեմք յերկնից որ նախնի ջերմ' սուրբ հաւատք զօրանայ ի մեզ և առ բապնդի ի Հայաստան :

Ձեզ օրինակ մարդկային ազգի այս չքնաղ արարածը , որ մի աշխարհ կ'արծէ : Մեր եւս նորա նման մարուր , սուրբ կուսութեամբ կենցաղավարեմք աշխարհի մէջ :

Թո՛ղ բազմանան կուսանք ի մեզ , թո՛ղ պայծառազարդի կոյս եկեղեցին Հայաստանեայց :

Մաէ՛ք ճգնարանը , Մանեայ այրը որ բաւական մեծ է և որուն երես զէպ հաբաւ կը հայի : Զարմանօք կը տեսնէք ջրոյ կաթիլ մը առաստաղին վրայ կը մեծնայ , յանկարծ վար կը ցայտէ . զանազան տեղեր այդ կաթիլի դոյութիւն կ'ըլլայ , հինգ վայրկենէն մի կաթիլ կ'իջնէ : Սեպուհայ ջերմեռանդ ոխաստորները կուգան աստ կ'ազօթեն , ժամերով կ'ազասեն , որդէսդի նախրական կաթիլը իւրեանց վրայ ցայտէ : Այն բարեգուշակ նշան է թէ՛ իւրեանց ոխա կատարուած է :

Երբեմն շատերու կը պատահի որ այդ սրբազան կաթիլը եթէ իւրեանց վրայ չ'իջնէ արտում ախար կը վերադառնան : Համբուրեցէ՛ք այս մամուսպատ հնացեալ քարեր , մեր հրաշագործ հայրապետի ճգնարանն եւ

զած է : Մանեայ այրի վրայ բաւական բարձրութեամբ կ'երեւի քարայր մը , ուր խոկական ճգնարանն է Ս. Լուսաւորչի և ուրանգ մալգէ կտրող ելնել :

Հայկազմ'ներ , իջնենք վար , ծառոց հովանւոյն տակ նախնիք , ես նկարագրեմ հայոց Սեպուհը և դուք լսեցէ՛ք :

Ո՛ր անմահ լեռան Հայաստանի , սրտիս մէջ նկարեցի . քո նկար , այժմ կ'ուզեմ նկարել ըզքեզ թղթերու վրայ : Գոհանամ բարձրագագաթ սարի ստորտը , ճիշդ նորա հարաւային կողմը կաշնի և մայլի ծառերով ծածկուած ես . աբեւմուսեան կողմը պտաւած է փոքր բլրակներով , անաւաներով . հարաւային կողմը կ'երեւի հսկայ , անասապատ լեռանց շղթայներ . Արեւելեան կողմը կ'երկարի անդնդախոր ձորը , անասախիտ հսկայ ծառատունկերով : Քո բազկացդ վրայ կը հանդուցանես Հայաստանի հրաշագործ հայրապետը : Ապառաժուտ հարաւային կողմը մեջքնակարան տախր ճգնասէր հովտապետին :

Ո՛վ կտրէ նկարել քո վեհմական մեծ լուսթիւնդ և խաղաղութիւնդ . քո անստրան տեսնողի սիրտը հոգեկան զնայլմամբ կը լցուի : Լեզու չունեցող մը բանաստեղծ ըլլալ կ'ուզէ : Գողթութիւն չունեցողը քերթող մը : Ուսովհետեւ դու կը ներշնչես ալեւսը հայրապետի

չնչով մտորուած օգերովդ կը բայախաւես ըզ մարդիկ , նոր մարդիկ կը ձուլես :

Ո՛ սուրբ լեռան , խնդրեմ պատմէ ինչ որ տեսար . Հայոց հզը քրիստոսասէր Տրդատ թագաւորը քանի անդամներ եկաւ ասա Ս . Հայրապետի մենարանը . և երբ մի անգամ իւր պալատականաց անկարգութեանց , անօրէնութեանց վրայ կը բողբէր , Պարթեւական հայրապետը՝ Տրդատի ձեռքէն բռնելով միասին Սեպուհույ գլխէն գէպ արեւելք իջան , խոնարհ գէպ ի ձոր անասաներու խոտութեանց մէջ մտան , ապառաժ մեծ քարի մօտ կանգ առին :

Ս . Գրեգորի հրամանաւ՝ Տրդատ իւր հուժկու բաղիօք քաշեց սուրը և քորը գիւրաբեկ անօթի նման երկուս ճեղքեց ու անոր վրայ կանգնեցան Հայաստանի անզուգական խնամակալները :

Ալեղարգ հայրապետը ասաւ սուրը իւր ձեռք և ըսաւ , « Տրդատ , ահա քեզ նշան հաւատարու » :

Սուրը ձգեց , գէպ երկինք օդին մէջ ըսելով , « Իմ Աստուածս կ'ըսէ թէ՛ քեռէ վերջ Արշակունեաց թագաւորները հետզհետէ պիտի տկարանան և պիտի վերցուի . Հայաստան ողբոյ և վախի կոծի տեսարան պիտի ըլլայ :

Սա ըլլ օդին մէջ մեաց խաչա՛ւես ,

Բեկեալ քարը Տրդատ քար ըսուեցաւ :

Սեպուհ , տեսա՛ր արդեօք , երբ արդարաւս էր մեծահաւատ արքայն Տրդատ՝ նախարարաց անուղղայ բարբէն ձանձրացած ձգեց իւր արքայական պերճ թագը և թշնամեաց ահարկու սարը , վազարշտպատէն Սեպուհ վաղեց իւր սրտի վշտացը մխիթար գաննելու . եկաւ աստ տեսաւ որ ճգնող հովուապետը իւր մահկանացուն կնքած աշխարհէն մեկնած է ,

Նորա նշխարացը վրայ ինկաւ , լացեց ու արտասուեց , շատ լացեց :

Չուզեց մեկնիլ աստի , իջաւ գէպ ի ձորը Տրդատ քարի մօտ գոնուող փոքր քարայրը իւր աղարանքը բրաւ :

Անմխիթար սգաւով կ'ողբար ազգի ազազայ կարուսար : Անողբմ և ա՛բարիշտ նախարարք իւրեանց սէգ նժոյգներով եկան աստ փառազորի արքայի մթին քարայրը : Հրախրեցին զայն ի գահ արքայական . նա կը լիչեցունէր նոցա ամէն արարք , ըսելով , « Աստուած բարկացած է այն ամէն անօրէնութեանց վրայ ու պիտի պատժէ շարաշար : Հայաստան աշխարհը թշնամեաց սոանակոխ պիտի ըլլայ , տէրութիւն , իշխանութիւն պիտի վերցունէ , ուղղուեցէ՛ք , ես ուղղութեանց վրայ կ'ուզեմ թագաւորել . եթէ ոչ , այս անշուք քարայր՝ թագաւորական ամէն ճոխութիւններէ աւելի

Իմ սիրա կը զուարթացունէ, չեմ ուզեր դուլ :  
Իմ լուսառու Գրիգորի մենարանի առջեւ  
Կուզեմ մեռնիլ ու թաղուիլ :

Սեպտեմբեր, անգութ նախարարաց ոճիրը  
Ի նշակես սեսար, նորա թունալից բաժակ մա-  
տուցին իւրեանց արգարատէր հզօր արքային :  
Նա խմեց և քո մայրիներու առկ ինկաւ թա-  
ւալազրը, նորա հեծութեան մրմունջ քո ձորը  
1919 :

Չտակաց երկիրք այս անգութ ոճիրին :


Լուսաւորիչ գլխոս հայրը իւր քնարանէն  
արթնցաւ, արթնցաւ : Բարձրացուց զլուխը,  
սեսաւ դէպի ձոր Տրդատ քաղի մաս :

Մայրիներու առկ փռուած Հայաստանի  
առիւծը վշտահար ցաւոց երկանց մէջ :

Տրդատ, իմ գուշակութիւն պիտի կա-  
տարաի, Հայաստանի համար սղբալ և աղ-  
թեւ այժմ օգուտ չունի :

Գու համբերէ, քիչ վերջը մեռերոց աշխարհը  
կը մանես, Հայաստան կը կրէ իւր անօրէնու-  
թեանց պատիժը լի ու լի :

Մինչեւ ուզուին, Սյո ցաւալի դէպքն  
ցարդ հազար չորս հարիւր ապի կը լինի և  
դեռ չը խրատուեցանք, դեռ չուզուեցանք :



2013

